



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

29.12.2020թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/122**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Բողոք բերող՝ «Քլինլայն» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, շենքերի մաքրման
ծառայությունների ձեռքբերում,

«ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով հրատապ բաց մրցույթ,
բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերում,

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/7» ծածկագրով գնանշման հարցում, բնակտարածությունների
մաքրման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «Քլինլայն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից
09.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի, «ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով հրատապ բաց մրցույթի և «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովներին փոփոխություններ կատարել հրավերներում և գնային առաջարկների ներկայացման պահանջը համապատասխանեցնել Կարգի պահանջներին, այն է՝ գնային առաջարկները ներկայացնել մեկ թվով պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով,

2. Պարտավորեցնել «ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերում և շենքերի մաքրման ծառայությունները և բնակտարածությունների մաքրման ծառայությունները սահմանել որպես առանձին չափաբաժիններ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 09.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից 09.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը՝ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/049» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ, արձանագրել է, որ պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ 10.12.2020թ.-ին հրապարակվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/049» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ չկայացած հայտարարելու վերաբերյալ հայտարարություն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից տրամադրված գրությունը: Ուստի տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը հանգել է այն եզրակացության, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքն վերոնշյալ ընթացակարգի մասով վարույթ ընդունելն ենթակա է մերժման, հաշվի առնելով, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/049» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

10.12.2020թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/122 համարի ծածկագիրը:

17.12.2020թ.-ին և 29.12.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 17.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.12.2020թ.-ին:

2. «Քլինլայն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Քլինլայն» ՍՊԸ-ն 09.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 03.12.2020թ. և 04.12.2020թ. հրապարակել է համապատասխանաբար ՀՀ ՊԵԿ-ՀՐՄ-ԾՁԲ-20/2, ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/049, ՀՀՊԵԿ-ՀՐՄԾՁԲ-20/5 և ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրերով գնման ընթացակարգերը իր կարիքների համար բնակարարաձույթունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով:

1.2. Վերոնշյալ ընթացակարգերի հրավերների համաձայն մասնակիցները պետք է գնային առաջարկները ներկայացնեն նաև փոկոսային հարաբերակցությամբ:

1.3. ՀՀՊԵԿ-ՀՐՄԾՁԲ-20/5 ծածկագրով հրավերի մեկ չափաբաժնում արհեստականորեն միավորվել են փարբեր ծառայություններ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 3-ին և 4-ին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է համապատասխանաբար, ՀՀ ՊԵԿ-ՀՐՄ-ԾՁԲ-20/2, ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/049, ՀՀՊԵԿ-ՀՐՄԾՁԲ-20/5 և ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրերով գնման ընթացակարգերի հրավերները /այսուհետ՝ հրավերներ/:

Հրավերների անբաժանելի մաս հանդիսացող պայմանագրի նախագծի հավելված N 1-ով ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մասնակիցը իր կողմից հաստատված ծառայությունների միավոր գներով լրացված աղյուսակը լրացնելիս պետք է հաշվի առնի աղյուսակի ծառայությունների համար սահմանված առավելագույն փոկոսային կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ՝ նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերով կցված ծառայությունների մատուցման համար սահմանված կշռի չափի 10%-ից:

ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ:

ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 32-րդ կետի

1/ 3-րդ ենթակետի ա/ պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից

հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից,

2/ 8-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ Կարգի համաձայն գնային առաջարկը տոկոսային կշիռներով ներկայացնելու պահանջ գնման ընթացակարգի հրավերով կարող է սահմանվել միայն շինարարական ծրագրերի գնման դեպքում:

Ներկայումս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հրավերներով սահմանված գնային առաջարկները տոկոսային կշիռներով ներկայացնելու պահանջը հակասում է Կարգի, ինչպես նաև ՀՀ սահմանադրության պահանջներին, քանի որ տվյալ դեպքում գնման առարկան հանդիսանում է ոչ թե շինարարական ծրագրերի, այլ բնակարարածությունների մաքրման ծառայությունների գնումը:

Միաժամանակ հայտնում ենք նաև, որ ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը բաղկացած է երեք չափաբաժնից, իսկ յուրաքանչյուր չափաբաժնում միավորված են շենքերի մաքրման ծառայությունները և բնակարարածությունների մաքրման ծառայությունները, ինչը կարծում ենք հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Քլինլայն» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել վերոնշյալ գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովներին փոփոխություններ կատարել հրավերներում և գնային առաջարկների ներկայացման պահանջը համապատասխանեցնել Կարգի պահանջներին, այն է՝ գնային առաջարկները ներկայացնել մեկ թվով պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

2. Պարտավորեցնել «ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերում և շենքերի մաքրման

ծառայությունները և բնակտարածությունների մաքրման ծառայությունները սահմանել որպես առանձին չափաբաժիններ:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 10.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/18413-2020 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից 09.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին՝ միաժամանակ 14.12.2020թ.-ին թիվ 1/18-2/78549-2020 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով <<Քլինլայն>> ՍՊԸ-ի կողմից ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-20/2, ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5 և ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրերով գնման ընթացակարգերի վերաբերյալ ներկայացված 09.12.2020թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/122 բողոքը՝ հայտնում ենք, որ.

1. Մասնակիցը, հրավերների պահանջների համաձայն, գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող առավելագույն գնով: Այսինքն՝ բողոքաբերի ներկայացված պահանջը առկա է հրավերում:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ ներկայացված մեկ թվով առավելագույն գնային առաջարկի հետ պետք է ներկայացվի ծառայությունների մատուցման գնացուցակ ըստ հասցեների, որպեսզի որևէ հասցեի կրճատման դեպքում պայմանագիրը կրճատվի համամասնորեն:

Ծառայությունների դասակարգումը և ըստ հասցեների դրանց արժեքների ներկայացումը, ինչպես նաև տրուսների կիրառումը չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը: Հարկանշական է այն, որ մասնակիցները գնային առաջարկ ներկայացնելիս 2019թ. ՀՀ ՊԵԿ կարիքների համար հայտարարված մաքրության ծառայությունների ձեռքբերման գնման գործընթացի արդյունքում ներկայացրել են մատուցված ծառայություններին ոչ համարժեք գին, օրինակ՝ ամենօրյա փոշիների մաքրման

ծառայությունների համար առաջարկել են 5000 դրամ, իսկ փարեկանի համար՝ 500000 դրամ:

Գլխավոր հանգամանքը այն է, որ պայմանագիրը կնքվելու է առավելագույն գնով և գնման առարկայի, ՀՀ ՊԵԿ փիրապետության փակ գտնվող փարածքների ու գործառույթների առանձնահատկություններից ելնելով շափ հաճախ դեպքեր են առաջանում, երբ անհրաժեշտ է լինում կրճատել որևէ փարածք կամ գործառույթ, որից ելնելով փոխվում է պայմանագրի արժեքը: Հետևաբար անհրաժեշտ է, որ մասնակիցը ներկայացնի հրավերներում առկա փեղեկափությունը, որը հետագայում հիմք կծառայի պայմանագրի ճիշտ կառավարմանը և պետական միջոցների արդյունավետ օգտագործմանը:

2. Ինչպես նշեցինք վերոգրյալում՝ ՀՀ ՊԵԿ փիրապետության փակ գտնվող փարածքները բազմազան են, և հաշվի առնելով փարածքների կառուցվածքային առանձնահատկություններն ու դրանցում իրականացվող գործառույթները, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված փարածքները իրենց օգտագործման ու սպասարկման ճանապարհներով և հողամասերով ՀՀ ՊԵԿ-ի համար հանդիսանում են որպես մեկ ամբողջություն՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից արդյունավետ չի համարվում դրանք առանձնացնելը, իրարից փարանջատելը և որպես առանձին օբյեկտներ դիփարկելը:

Հարկանշական է նաև այնպիսի փարածքների առկայությունը, որոնք իրենց փեղադիրքով և մաքրման ծառայությունների բնույթով չեն կարող հստակ դասվել շենքերի մաքրման և/կամ բնակփարածությունների մաքրման ծառայությունների մեջ:

Գնման գործընթացը կազմակերպելիս հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ ՀՀ ՊԵԿ վարչական շենքերը հանդիսանում են հատուկ պահպանության նշանակություն ունեցող օբյեկտներ, որտեղ առկա են հարկային, մաքսային գաղտնիք պարունակող փեղեկափություններ և գործում են անցագրային խիստ, իսկ որոշ փարածքներում նաև հատուկ ռեժիմներ:»:

4. ԳԲԲԱ-LO-2020/122 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շենքերի և բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.12.2020թ.-ին հայտարարվել է «ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-20/2», 04.12.2020թ.-ին՝ «ՀՀՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-20/5» և 07.12.2020թ.-ին՝ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/7» ծածկագրերով գնման ընթացակարգեր (այսուհետ նաև՝ Ընթացակարգեր):

ii. Հայտերի բացման նիստի օր է սահմանվել համապատասխանաբար 18.12.2020թ.-ին և 21.12.2020թ.-ին:

iii. Ընթացակարգերի հրավերներով (այսուհետ նաև՝ Հրավերներ) սահմանվել է թիվ 2.1 հավելվածը՝ ծառայությունների մատուցման գնացուցակը և նշում այն մասին, որ մասնակիցը իր կողմից հաստատված՝ ծառայությունների միավոր գներով լրացված աղյուսակը լրացնելիս պետք է հաշվի առնի սույն աղյուսակի ծառայությունների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ՝ նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերով կցված ծառայությունների մատուցման համար սահմանված կշռի չափի 10%-ից:

iv. «ՀՀՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-20/5» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի համաձայն՝ գնման առարկա հանդիսացող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերումը խմբավորված են 3 չափաբաժիններում, մասնավորապես, 1-ին չափաբաժնով նախատեսված ծառայությունների մատուցման հասցեն է՝ Շիրակի մարզ, Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի, թիվ 2/14, 2-րդ չափաբաժնով նախատեսված ծառայությունների մատուցման հասցեն է՝ Շիրակի մարզ, գ. Բավրա, Գյումրիի-Նինոծմինդա մայրուղի 63/4 և 3-րդ չափաբաժնով նախատեսված ծառայությունների մատուցման հասցեն է՝ Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փող. թիվ 69:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից 09.12.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Չարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը,

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը,

3. օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառույթային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ

տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել,

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից շենքերի և բնակատարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.12.2020թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-20/2» ծածկագրով, 04.12.2020թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով և 07.12.2020թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/7» ծածկագրով գնման ընթացակարգերի հրավերներով սահմանվել է թիվ 2.1 հավելվածը՝ ծառայությունների մատուցման գնացուցակը և նշում այն մասին, որ մասնակիցը իր կողմից հաստատված՝ ծառայությունների միավոր գներով լրացված աղյուսակը լրացնելիս պետք է հաշվի առնի սույն աղյուսակի ծառայությունների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ՝ նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերով կցված ծառայությունների մատուցման համար սահմանված կշռի չափի 10%-ից:

Վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձն փաստում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից շենքերի և բնակատարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.12.2020թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-20/2» ծածկագրով, 04.12.2020թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով և 07.12.2020թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/7» ծածկագրով գնման

ընթացակարգերի հրավերներով սահմանված այն դրույթը, որ մասնակիցը իր կողմից հաստատված՝ ծառայությունների միավոր գներով լրացված աղյուսակը լրացնելիս պետք է հաշվի առնի սույն աղյուսակի ծառայությունների համար սահմանված առավելագույն կշիռները, և այն որ կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ՝ նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերով կցված ծառայությունների մատուցման համար սահմանված կշռի չափի 10%-ից, հակասում է Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջներին, որպիսի պայմաններում նման գնահատման չափանիշներ նշված լինելու հանգամանքը հանգեցնում է սույն ընթացակարգի Օրենքի 3-րդ հոդվածի դրույթների խախտմամբ կազմակերպված լինելուն, քանի որ **գործադիրը հստակ սահմանել է, որ միայն շինարարական ծրագրերի գնման դեպքում է հնարավոր կիրառել Կարգի վերոնշյալ դրույթով սահմանված պահանջները:**

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են և սահմանափակում են հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները, ինչը հանգեցնում է բողոքի վեճի առարկան հանդիսացող գնման ընթացակարգերը չկայացած հայտարարելուն:

Ինչ վերաբերում է բողոքով նշված այն պնդմանը, որ «ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը բաղկացած է երեք չափաբաժնից, իսկ յուրաքանչյուր չափաբաժնում միավորված են շենքերի մաքրման ծառայությունները և բնակատարածությունների մաքրման ծառայությունները, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանություններով.

Օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝ էլեկտրոնային աճուրդը, մրցույթը, գնանշման հարցումը, մեկ անձից գնումը:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Սույն դեպքում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, շենքերի և բնակատարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով նախատեսված ծառայությունները խմբավորելով 3 չափաբաժիններում՝ կիրառել է մրցակցային գնման ձև, այն է՝ հայտարարել է հրատապ բաց մրցույթ, ինչի արդյունքում Պատվիրատուն որևէ կերպ չի խուսափել մրցակցային գնման ձևի կիրառումից, որպիսի գործողությունների արդյունքում Օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված խախտում առկա չէ: Ավելին, Պատվիրատուի նման գործողությունները կապահովեն մրցակցության հավասար պայմաններ՝ հնարավոր մասնակիցների համար, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը, հատկապես այն դեպքում, երբ ծառայությունները պետք է մատուցվեն երկու տարբեր մարզերում և մեկ մարզի տարբեր քաղաքներում: Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ այս մասով բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից 09.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/122 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել «ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-20/2» ծածկագրով, «ՀՀՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով հրատապ բաց մրցույթերի և «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովներին փոփոխություններ կատարել հրավերներում՝ համապատասխանեցնելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված պահանջներին:

3. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



ԼԵՎՈՆ ՕՎԱՆՅԱՆ